


## Խմբային աշխատանք Օր 2-րդ

### Խմբերի թիվը՝ 3

6-7 մասնակիցներ յուրաքանչյուր խմբում: Մասնակիցները կբաշխվեն պատահական սկզբունքով:

Առաջադրանք. այս առաջադրանքը բաղկացած է երկու մասից, որոնցից յուրաքանչյուրին կհատկացվի 20 րոպե, ևս 10 րոպե կհատկացվի արդյունքների ներկայացման և քննարկման համար: Առաջադրանքի ընհանուր տևողությունն է 50 րոպե:

### Ներածություն



- <<Ազգային ամբողջականության համակարգը>> (ԱԱՀ) ներկայացված է հունական տաճարի ձևով: Տաճարն ունի տանիք, այն է՝ ազգի ամբողջականությունը, որը հենված է մի շարք հենասյուների վրա: Հենասյուներից յուրաքանչյուրն ազգային ամբողջականության համակարգի տարրերից մեկն է: Տաճարի մի ծայրում գտնվում են ինստիտուցիոնալ հենասյուները՝ դատական իշխանությունը, օրենսդիրը և այլն: Մյուս ծայրում

գտնվում են այնպիսի հենասյուներ, ինչպիսիք են Մարդու իրավունքների պաշտպանը, ազատ լրատվամիջոցները, քաղաքացիական հասարակությունը և այլն:

- Վերոհիշյալ <<հենասյուները>> տարբեր հասարակություններում կարող են միմյանցից տարբերվել: Տարբեր հասարակություններում որոշ հենասյուներ կարող են ավելի ուժեղ լինել, իսկ մյուսները՝ ավելի թույլ: Չնայած առկա տարբերություններին՝ հավասարակշռությունը միշտ պահպանվում է:
- Ազգային ամբողջականության համակարգի յուրաքանչյուր ինստիտուցիոնալ <<հենասյուն>> ունի հիմնական <<նորմեր ու դրանց գործնական դրսևորումներ>>: Այդ նորմերից ու դրանց գործնական դրսևորումներից է բաղկացած այն հիմնական <<գործիքների համախումբը>>, որոնք կիրառվում են տարբեր ինստիտուտների կողմից կամ օժանդակում դրանց գործունեությանը:
- Ազգային ամբողջականության համակարգի մոտեցումը առաջարկում է կոռուպցիայի ախտորոշման և հնարավոր <<բուժման>> նոր ձև: Ինստիտուտները կամ նորմերն ու դրանց գործնական դրսևորումները (օրինակ՝ դատական իշխանությունը կամ քրեական իրավունքը) առանձին դիտարկելու և ապա միմյանց հետ չկապակցված բարեփոխումների ծրագրերի վրա կենտրոնանալու փոխարեն՝ մենք ամբողջական մոտեցման միջոցով սկսում են դիտարկել առկա փոխհարաբերությունները, փոխկախվածությունը միմյանցից և համակարգի արդյունավետությունը:
- Կոռուպցիայի դեմ պայքարելու և ամբողջականությունն ուժեղացնելու գործում համակարգային մոտեցման կիրառումը մարտահրավեր է ինչպես ընդհանուր ազգային համակարգի, այնպես էլ պետական կառավարման առանձին մարմինների և կազմակերպությունների համար: Հաջորդ երկու վարժությունները կարող են օգտակար լինել ազգային ամբողջականության համակարգի հայեցակարգն ըմբռնելու և կոնկրետ ազգային/կազմակերպական համատեքստում այն կիրառելու համար:

### **Առաջին վարժություն - 20 րոպե**

Մասնակիցները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խմբին տրվում է հետևյալ առաջադրանքը:

Ջերեմի Փոփի կողմից մշակված ԱԱՀ-ի ամբողջական մոտեցման հիման վրա ներկայացրեք Հայաստանի ԱԱՀ-ի ձեր տեսլականը: Խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել և առանձին-առանձին ներկայացնել համակարգի

հիմնաքարերը, ամբողջականության ինստիտուցիոնալ հենասյունները, յուրաքանչյուր հենասյանն օժանդակող նորմերի գործնական դրսևորումները, ինչպես նաև <<տաճարի>> տանիքի վրա պատկերված շրջաններում ներկայացված հասկացությունները :

**Վարժություն երկրորդ - 20 րոպե**

Մասնակիցները բաժանվում են երեք խմբի: Յուրաքանչյուր խմբին տրվում է հետևյալ առաջադրանքը:

ԱԱՀ-ի հայեցակարգը կարող է կառուցողական կերպով կիրառվել ցանկացած կազմակերպության համատեքստում՝ պատկերելով համակարգն այնպես, որ այն պահպանի կազմակերպության ամբողջականությունը: Ջերեմի Փոփի կողմից մշակված ԱԱՀ-ի ամբողջական մոտեցման հիման վրա ներկայացրեք Հայաստանի պետական կառավարման համակարգի որևէ **կոնկրետ ինստիտուտի՝ նախարարության, մարզային կամ տեղական ինքնակառավարման մարմնի** ամբողջական համակարգի ձեր տեսլականը: Առաջարկում ենք ընտրել այն ինստիտուտը, որին քաջ ծանոթ եք՝ տեսական որևէ կառույցի փոխարեն: Խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել և առանձին-առանձին ներկայացնել համակարգի հիմնաքարերը, ամբողջականության ինստիտուցիոնալ հենասյունները, յուրաքանչյուր հենասյանն օժանդակող նորմերի գործնական դրսևորումները, ինչպես նաև <<տաճարի>> տանիքի վրա պատկերված շրջաններում ներկայացված հասկացությունները :

**Արդյունքների ներկայացմանը կհատկացվի 10 րոպե:**